ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

04.11.2019**թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ**-19/2 **պայմանագրի**

ք. Երևան 21.02.2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ե. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1.2 Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում և N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է՝ 163 616 900 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն վեց հարյուր տասնվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, որից՝ 27 269 483 (քսանյոթ միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր ութսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր օրացուցային գրաֆիկով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.3 Պայմանագրի N 3 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. **Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
կառավարական տուն 3	գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500374479000
Հ/Հ 900011023778	ՀՎՀՀ 00440841
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի
21. 02.2020թ. կնքված N 1 համաձայնագրի

<<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման

2020թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների ծավալների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը մինչև
1	97 604 600	30.09.2020թ. ներառյալ
2	143 616 900	30.12.2020թ. ներառյալ
3	163 616 900	01.03.2021թ. ներառյալ

ըստ աշխատանքների առանձին տեսակների

N ը/կ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	Վերակառուցման միջոցառումների և ներքին հաղորդակցուղիների կառուցման աշխատանքներ, ներքին հարդարման աշխատանքների մեկնարկ	30.09.2020թ. ներառյալ
2	Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	30.12.2020թ. ներառյալ
3	Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքների ավարտ	01.03.2021թ. ներառյալ

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի
21.02.2020թ. կնքված N 1 համաձայնագրի

<<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611200/1	Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	97 604 600	97 604 600	97 604 600	143 616 900	143 616 900	163 616 900	163 616 900

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 1050-02
«21» 02 2020

Բենեֆիցիար՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Պրինցիպալ՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) հետ կնքված **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2** ծածկագրով պայմանագրից և նրա անբաժանելի մասը կազմող **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1**-ից բխող «**Գևորգյան և Ներսիսյան**» **ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում (պայմանագրի ապահովում):

2. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **16,361,690 (տասնվեց միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 21.02.2020թ.-ից մինչև 30.04.2021թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով, ընդ որում պահանջում պետք է նշվի, թե պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Ն. Սարգսյան**

Հավելված N 9
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

«21» Փետրվար 2020թ.**

ք. Երևան

"Գևորգյան և Ներսիսյան"ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե.Գևորգյանի (անձնագիր AK0534471 տրված 17.06.2010թ. 067-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ "Գևորգյան և Ներսիսյան"ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 11500374479000	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00440841	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **4 538 100/չորս միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար հարյուր/**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ/AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ / Ե.Գևորգյան / /_____/ 21.բ. Կ.Տ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*